ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2016 թվականի N 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2016թվականի մարտի 29-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 220-Ա որոշումը, **ո ր ո շ ո ւ մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-2.3-38) անձնագիրը՝ համաձայն հավելվածի:

2.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-2.2-26) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

Բաժնի պետը Վարչության պետի, Բաժնի գլխավոր մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>.

2) գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-2.3-28) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետը:

Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի պետի, Բաժնի մյուս գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ.մարտի 30
ք. Կապան